
II

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱԼԲՈՄԱՅԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՐԱ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ *

ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Հովհ. Թումանյան, անձնական և ստեղծագործական հոգեբանություն, պահ և հավերժություն, իդեալ և իրականություն, բարի և զեղեցիկ, ցավ, սեր, մենակություն:

Նախաբան

Հովհ. Թումանյանի քնարերգության մեջ առանձին շարք են կազմում, այսպես կոչված, ալբոմային բանաստեղծությունները, որոնք երբեք չեն արժանացել ուսումնասիրողների ուշադրությանը. մեկ-երկուսին անդրադարձել են միայն առիթից առիթ՝ այլ խնդիրների բերմամբ: Մինչդեռ դրանք, առանձին-առանձին կամ լրացնելով մեկը մյուսին, բացահայտում են բանաստեղծի ստեղծագործական հոգեբանության, գեղագիտական նախասիրությունների, անձնական հուզաշխարհի ու մտաշխարհի շատ էական կողմեր: Ուստի հետաքրքիր է դրանք դիտարկել իբրև որոշակի համակարգ ներկայացնող ամբողջություն՝ բանաստեղծի ստեղծագործության միասնական համատեքստում:

Թումանյանի ալբոմայինների աշխարհում

Ալբոմային բանաստեղծությունն սկզբունքորեն չի տարբերվում քնարական մյուս ժանրատեսակներից, միայն միշտ ունենում է որոշակի հասցեատեր: Դրանով էլ պայմանավորվում է դրանց յուրահատուկ բնույթը՝ չմիջնորդավորված ուղղակի հաղորդակցություն հասցեատիրոջ հետ, չափածո նամակ, որ նամակագիրը իր ձեռքով է հանձնում հասցեատիրոջը՝ առանց պատասխանի ակնկալության: Այն, ինչ բանաստեղծը սովորաբար ենթատեքստով է հաղորդում իր ընթերցողին, այստեղ ասվում է բաց տեքստով. բանաստեղծն ու մարդը երևում են հայելային հստակությամբ:

Թումանյանի ալբոմայիններն աչքի են ընկնում խոհերի ու ապրումների, ինչպես նաև՝ արտահայտության ձևերի բազմազանությամբ: Դրանք որոշակի առիթով հանպատրաստից գոյավորված հոգեբանական պահի քնարական ճեպանկարներ են, որոնք հաճախ միանգամայն

* Ներկայացվել է 15. VII. 2020 թ., գրախոսվել է 20. VII. 2020 թ., ընդունվել է տպագրության 24. IX. 2020 թ.:

ամբողջական ու ավարտուն կառույց են ներկայացնում¹: Դրանց մի մասն ընդունված կարգին՝ պատշաճ սիրալիր հաճոյախոսություններ են ալբոմի տիրուհուն՝ թումանյանական ժպտահարույց հումորով, սրամտություններով ու շոյող պերճախոսությամբ: Օրինակ՝ Մ. Վարդազարյանի ալբոմում գրած այս երկու քառատողը.

Նայում եմ քեզ ... միտս է գալիս,
Որ տեսել եմ ուրիշ մի տեղ՝
Կապուտաչա, թարմ ժպտալիս
Ու զարդարված այսպես շքեղ:

Հա՛ ... դու չեիր. այն քեզ նման
Մի ծաղիկ էր, որ ես տեսա ...
Ես այն տեսա վաղ մի գարնան ...
Է՛հ, դու ծաղկիր ... թոռմել է նա ... (հ. 1, էջ 197):

Այս դեպքերում էլ հաճախ մտքի անսպասելի թռիչքով բանաստեղծն ընթերցողի ուշադրությունը շեղում է այլ ուղղությամբ, ինչպես այստեղ: Վերջին տողն արդեն պարզ հաճոյախոսություն չէ. գործ ունենք ամեն ինչի անցողիկության մասին թումանյանական կենսա-

¹ Պատահական չէ, որ դրանցից մի քանիսը բանաստեղծը ժամանակին տպագրել է մամուլում կամ ժողովածուներում: Քնարական այդ ենթաժանրին նա առանձին կարևորություն է տվել՝ երբեմն նույնիսկ հանդիմանելով իր մոտիկներին, որ իրենց ալբոմներում տեղ են տալիս ամեն տեսակ գրության: Օրինակ՝ Մարիամ Վարդազարյանի ալբոմում կարդալով իր մտերիմ ընկերներ Ա. Զարգարյանի և Փ. Վարդազարյանի արձակ գրությունները՝ դրանց կողքին գրում է.

Երբ թույլ եք տալիս, որ Ձեր ալբոմում
Անշնորհքները գրեն և արձակ,
Ինձ այնուհետև էլ ի՞նչ է մնում,
Եթե ոչ այսպես ասել համարձակ,—
Ինչո՞ւ Ձեր ալբոմն, ազնիվ օրիորդ,
Դուք բաց եք անում ամեն մեկի մոտ,
Որոնք ոչ ցանկալ, ոչ հայտնել գիտեն
Եվ ալբոմն իզուր պիտի մրոտեն (Հովհ. Թումանյան. Երկերի լիակատար
ժողովածու, հ. 1, Երևան, 2018, էջ 379):

Մեջբերումները Թումանյանի «Երկերի լիակատար ժողովածուի» ակադեմիական տասնհատորյակից (1988–1999 թթ.) կամ առաջին երեք հատորների լրամշակված հրատարակությունից (2018–2019 թթ.) են: Այսուհետ ժողովածուների հատորներն ու էջերը կնշվեն մեջբերումներին կից:

փիլիսոփայության յուրօրինակ դրսևորման հետ: Հիշենք «Թմկաբերդի առում»-ի հայտնի քառաստորը.

Անցավ անտես ու աննրման
Էն սիրունը աշխարհից,
Ինչպես ծաղիկն անցած գարնան,
Որ չի ծաղկիլ էլ նորից (հ. 4, 1991, էջ 57):

Ալբոմայինների մեծ մասը, սակայն, խորհրդածության տեղիք տվող ինքնաբացահայտումներ են, ինչպես, օրինակ, 1893-ին Օսան Գիրգիդյանի ալբոմում արված մի վեցաստորոտ տանավոր գրառում, որը, թերևս, երիտասարդ Թումանյանի առաջին ալբոմայինն է.

Ինչ ես ուզում, որ թողնեի
Քո ալբոմում հիշատակ,
Սիրո հրդեհ փոթորկալի,
Ուրախությո՞ւն, թե՞ տանջանք:

Դու ուզում ես, բայց որի՞ց,
Սիրտս լիքն է բոլորից (հ. 1, էջ 148):

Քառաստոր մասը, բնորոշ ալբոմային շեշտադրությամբ, որն է անակնկալ չի ենթադրում: Վերջին երկտողը միանգամից փոխում է տրամադրության շեշտը՝ «Սիրտս լիքն է բոլորից»: Կատարվում է սա, ինքնաճանաչման հասած երիտասարդ բանաստեղծի հավաստում, թե՞ ինքնաճանաչման փնտրտուք: Վերջին ենթադրության օգտին է խոսում այն փաստը, որ նա արդեն բանաստեղծական երկու ժողովածուների հեղինակ էր, ճանաչված էր հրապարակում, բայց իր իսկ արտահայտությամբ՝ դեռ «չէր գտել իր տեղը»²: Պատահական չէ, որ երկրորդ ժողովածուից (1892 թ.) հետո ավելի քան մեկ տասնամյակ նոր ժողովածուով հանդես չէր գալիս: Այդպես է մեծերի ճակատագիրը. նրանք կարող են անընդհատ բարձրանալ ու բարձրանալ, բայց որքան մոտենում են իրենց երազած «Վեր»-ին, նա այնքան հեռանում է³:

² Անգամ 1918 թ., երբ արդեն ապրում էր իմաստուն քառյակների բուն շրջանը, Թումանյանը մի առիթով այսպիսի խոստովանություն է անում. «... ինչպես իմ նմանները չեն գտել իրենց տեղը, էնպես էլ ես իմ տեղը չեմ գտել, չեմ նստել ու իմ գործը չեմ սկսել, այլ դեռ պատրաստվում եմ: Սրա պատճառը կասեի, եթե մեկը լինե՞ր ...» (հ. 7, Երևան, 1995, էջ 487): Ուսումնասիրողները, սովորաբար, դա կապում են միայն բանաստեղծի հասարակական զբաղվածության և ընտանեկան հոգսերի հետ: Դա, իհարկե, կար: Բայց հիմնականը ստեղծագործական-հոգեբանական էր:

³ Մաթեմատիկայում ասիմպտոտիկ կորի հասկացություն կա: Դա անընդհատ շարունակվող կորագիծն է, որը կարող է անվերջ մոտենալ առանցքային ուղղուն, բայց երբեք չհասնել նրա հետ: Այդպիսին է բոլոր

Հանձին կնոջ՝ այդ երիտասարդ ազգականուհու, Թումանյանը հավանաբար հայտնաբերել էր մեկին, որի հետ կարող էր հաղորդակցվել: Գուցե և դա է պատճառը, որ նրա այբումում կատարած բոլոր գրառումները, իրոք, հեռուն գնացող մտորումների տեղիք են տալիս⁴:

Թումանյանի այբումայինների շարքում առանձին ուշադրության են արժանի 1916–1919 թթ. ընթացքում դուստրերի այբումներում արված չափաժող գրառումները⁵: Իմաստային տարողությամբ դրանք, իհարկե, հավասարարժեք չեն. սովորական «ձեռագ» հորինվածքների կողքին կան նաև պայծառատեսության ակնթարթի կատարյալ պտուղներ, որտեղ բովանդակությունը՝ ձևավորվում, ձևը բովանդակավորվում է միաժամանակ: Դրանց իրական աստատը բացելու համար հաճախ ենթատեքստային պեղումներ են հարկավոր: Բնորոշ օրինակ կարող է լինել դուստրերից առաջինը՝ Նվարդի այբումում 1916 թ. հոկտեմբերի 27-ին գրած «Իմ Արուսյակին» վերնագրով բանաստեղծությունը: Նվարդը հիշում է, որ նույն թվականին Բորժումում հանգստանալիս հայրը հաճախ երեկոները իրենց հավաքում էր պատշգամբում, միասին դիտում էին աստղազարդ

մեծերի ձգտումը դեպի կատարյալը: Նրանք անընդհատ կարող են մոտենալ այդ սահմանին, բայց երբեք չեն կարող հասնել այն, որտեղից այլևս գնալու տեղ չկա:

⁴ Օ. Գիրգիդյանի այբումում Թումանյանը տարբեր ժամանակներում ևս երեք այդպիսի չափաժողություն է թողել:

Ատելուս համար
Դեռ չեմ զոջացել,
Բայց սիրուս համար
Շատ եմ ողբացել (1893, մարտի 24) (հ. 1, էջ 150):

Էլ չեմ կարող գրել «ձեռագ»,
Սիրտս վաղուց է մեռած (1899, ապրիլի 18) (նույն տեղում, էջ 393):

... Ամեն բան երկրում ունի մի սահման,
Որտեղից որ նա ետ է նահանջում.
Աննահանջ է միայն սիրտը սիրահար,
Սերը չէ միմիայն սահման ճանաչում ... (1890-ական թվականներ)
(նույն տեղում, էջ 395):

⁵ Այբումային կամ այլ առիթներով հանպատրաստից ոտանավորներ Թումանյանը նվիրել է բոլոր դուստրերին՝ Բացի Սեդայից, նրա անունով այդպիսի որևէ գրություն մեզ չի հասել: Մի մասը սնագիր է և բանաստեղծի կենդանության օրոք չի տպագրվել: Սակայն դրանք նրա համար սովորական գրչախաղեր չեն եղել: Այդ մասին է վկայում դրանց հետ կապված ուշագրավ մի փաստ: 1922 թ. ամռանը նկարիչ Տարագրոսը նամակով Թումանյանին հայտնել է նրա մի քանի գործեր նկարազարդումներով հրատարակելու իր մտադրության մասին՝ ընտրությունը թողնելով բանաստեղծին: Վերջինս իր մշակած ժողովրդական լեգենդների և քաղաքների կողքին հիշում է նաև դուստրերի այբումներում գրած իր բանաստեղծությունները. «Ես աղջիկներիս նվիրած մի տասը ոտանավոր ունեմ, որ առանձին– ինտիմ մի այբում են կազմում – գուցե էս» (հ. 10, Երևան, 1999, էջ 430):

երկինքը, և աղջիկներից ամեն մեկն իր համար մի աստղ էր ընտրում⁶: Այդպիսի մի գիշերվա մասին է բանաստեղծությանը կից հեղինակային ծանոթագրությունը. «Ու աղջիկներից ամեն մեկը մի աստղ ընտրեց կամ համաստեղություն. Նվարդն էլ ընտրեց Վեներան, Լուսաստղը, Արուսյակը»⁷: Դա էլ հենց անմիջական ազդակ է ծառայել մտահղացման համար: Բայց ինչո՞ւ հենց Նվարդի ընտրությունն է հանկարծակի լուսավորել բանաստեղծի միտքը, ի՞նչ զգացմունքներ են արթնացել այդ պահին նրա հոգում:

Հայտնի է՝ լույսի ու խավարի խորհրդանշանները, որ ծագումնաբանորեն կապվում են բանահյուսական ավանդույթի հետ, հիմնարար գործառույթներով հաճախ են հայտնվում Թումանյանի բանաստեղծական կառույցներում: Բայց եթե հեքիաթներում դրանց բանահյուսական բնույթը չի փոխվում, ապա բանաստեղծություններում դրանք կապվում են ժամանակակից պատկերացումների հետ, որոնց համաձայն՝ տիեզերքի կենսագործունեության հիմքը հակադիր ուժերի հավիտենական փոխբացասումն ու փոխհաստատումն է: Աստղային գիշերը բանաստեղծին ներկայանում է որպես ասպարեզ առկայծող լուսատուների ու համատարած մութի հակամարտություն, որն ավարտին է մոտենում Լուսաստղի ծագումով և Արեգակի ծնունդով: Այդ պահի ոգեշունչ բանաստեղծականացումն է «Իմ Արուսյակին» ալբոմայինը:

Հին հեթանոս արևորդիների ցնծությամբ է բանաստեղծը դիմավորում լուսաբացն ավետող աստղի ծագումը.

Լուսապրսակ
Իմ Արուսյակ,
Ի՛նչ գեղատես
Ու ի՛նչ զրվարթ
Վառվրտում ես
Աստեղագարդ ,
Պայծառ ու պերճ
Գիշերվա մեջ,
Երկնից վրա
Ու ճառագում
Մինչ ահարկու
Անդունդները
Իմ խոր հոգու⁸:

⁶ Տե՛ս Ն. Թումանյան. Հուշեր և զրույցներ, Երևան, 1987, էջ 147:

⁷ Ըստ հին հավատալիքի՝ աստղերը մահացածների հոգիներն են, որոնք տնօրինում են ապրողների ճակատագիրը: Երեխաների մոտ սովորություն կար նայել աստղային երկնքին և իրենց համար բախտի աստղ ընտրել: Իմ սերնդի մանկության տարիներին այդ հավատալիքը դեռ գործում էր:

⁸ Հովի. Թումանյանի թանգարան, գլխավոր գույքամաստյան (այսուհետ՝ ԹԳԳ), 860/2, Նվարդի ալբոմ:

Տպագրության պատրաստելիս (1921 թ.) բանաստեղծը ձեռագիր բնագրում էական փոփոխություններ է կատարել: Նախ՝ բերված հատվածից, որ բանաստեղծության առաջին մասն է, վերջին հինգ տողն ամբողջապես դուրս է թողել, որովհետև դրանք ինչ-որ չափով իջեցնում են նախորդ տողերի ցնծագին փառաբանական տոնը: Վեցերորդ տողի «աստեղագարդ» մակդիրը փոխել է «իմ աստղագարդ» կապակցությամբ, որը գիշերվա անդամ պատկերին հաղորդում է անձնավորված փոխաբերական բնույթ:

Ձեռագրի երկրորդ վերջին մասում՝

Այո՛, թեև
Չեղավ արև
Ոչ իմ կյանքում,
Ոչ իմ հոգում,
Բայց բյուր արեգ
Ու բյուր ցերեկ
Միշտ արժեր
Էսքան շրթեղ,
Հրաշագեղ
Մի գիշեր ...⁹

երրորդ և չորրորդ տողերի դիմավորի ձևերին փոխարինել են համապատասխանաբար «էս պաղ կյանքում» և «ու երկնքում» անդամ կապակցությունները: Ստացվել է այն, ինչ-որ իբրև կանոնիկ տարբերակ տեղ է գտել ակադեմիական տասնհատորյակում (հ. 1, էջ 307):

Կատարված փոփոխությունները էապես փոխել են մտահղացման նախնական բովանդակությունը: Ձեռագիր տարբերակում բանաստեղծական իրադրության սահմանային եզրերում հեղինակն ու երկնային լուսատուն են, տպագիր բնագրում վերջինիս փոխարինում է նրա անունն ընտրած դուստրը: Ի դեմս Արուսյակի՝ լուսերգությունն իբրև բանաստեղծական աշխարհատեսության կերպ, պահպանում է քնարական իրադրության իր կազմակերպիչ գործառնությունը, բայց փոխում է ուղղվածությունը՝ դեպի մարդկային ներաշխարհի զուտ անձնական շերտեր: Այդ «շրթեղ», «հրաշագեղ» գիշերները՝ դուստրերի հետ, բանաստեղծին տրամադրում են նայել իր ներսը, զննել հոգու «ահարկու անդունդները»՝ գտնելու համար սփոփանքի լուսավոր մի անկյուն: Եվ գտնում է: Վերևում ճաճանչափայլ Արուսյակն է՝ բացվող օրվա ավետաբերը, ներքևում՝ իր շուրջը, իրենից սերված երկրային հրաշքները՝ դուստրերը: Հրճվանքի այդ գիշերային պահերը՝ թեև կարճատև, բայց «միշտ», «բյուր արեգ» ու «բյուր ցերեկ» արժեն, քանի որ հոգին բեռնաթափում են «ահարկու» մթություններից: Լույսի հաղթանակի այդ պահերին բանաստեղծը դառնում է մարդ՝ զուտ մարդկային երջանկության գիտակցությամբ, մարդը վերստին դառնում է

⁹ Նույն տեղում:

բանաստեղծ՝ տիեզերքի հետ հաղորդակցվելու, արարչության սկզբին հասնելու վերամարդկային մղումով: Գուցե հենց այդպիսի մի պահի է ծնվել հայտնի քառյակը.

Աստեղային երազների աշխարհքներում լուսակաթ.
Մեծ խոհերի, խորհուրդների հեռուներում անարատ,
Անհիշելի վերհուշերի մըշուշներում նըրբաղոտ՝
Երբեմն, ասես, ըզգում եմ ես, թե կըհասնեմ Նըրա մոտ ...

(հ. 2, 2018, էջ 55):

Կամ մի թե պատահական է, որ Արուսյակի տեսիլը բանաստեղծի մտորումների տիրույթում վերստին հայտնվել է կյանքի վերջին ամիսներին՝ ոգեշնչելով նրա կարապի երգը¹⁰:

Թումանյանի ալբոմայինները հաճախ մտահղացվում ու գրվում են բանաստեղծության հետ կապ չունեցող, նույնիսկ բացահայտ պրոզայիկ հանգամանքներում, որն առհասարակ բնորոշ չէ այդ ժանրատեսակին: Օրինակ՝ բնակարան վարձելու մասին խոսակցություններ մեկ անգամ չէ, որ եղել են բանաստեղծի ընտանիքում: Անկասկած, այդպիսի խոսակցություններից մեկն էլ ազդակ է ծառայել 1917 թ. հունիսի 17-ին Աշխենի ալբոմում գրված երկու քառատողերի համար.

Մայրըդ էն օրն ասում էր ինձ,
Թե զուր թողիր տունը ձեռից,
Էնքան էժան ու Էնքան հեշտ,
Էնքան հարմար, անհըրաժեշտ ...

Նա տակավին չի իմանում,
Թե աշխարհքն էր ինձ պատկանում.
Նույնիսկ ձրրի, առանց փողի,
Միրտըս չուզեց – ձեռից թողի ... (հ. 1, էջ 313):

Պոեզիայի տեսաբաններն ու ստեղծագործական հոգեբաններն ամենատարբեր բացատրություններ են տալիս, թե ինչպես է տեղի ունենում առօրյա կենցաղայինի և անտեսանելի հոգեկանի զուգավորման այն հրաշքը, որն անսպասելի թոփչք է տալիս ստեղծագործողի մտքին ու երևակայությանը¹¹: Գուցե դա հենց այն է, ինչ բանաստեղծը համարում է «իրավամբ աստվածային», որ լիովին հասու չէ բանականությանը, կարող է կռահվել միայն զգացմունքով ու ենթագիտակցությամբ: Իրական արդյունքը, սակայն, լինում է բացատրելի: Այս դեպքում գործ ունենք Թումանյանի ստեղծագործական հոգեբանության երկու էական կողմերի հետ՝ իր մեծության

¹⁰ Մեզ միայն սևագիր հասած այս բանաստեղծության՝ միջնադարյան լուսերգերի հետ ունեցած կապի մասին ժամանակին ուշագրավ դիտարկումներ է արել Թադևոս Ավդալբեկյանը (տե՛ս հ. 1, էջ 760–761):

¹¹ Հ. Էդոյան. Պոեզիայի երկակի տեսողությունը, Երևան, 2020, էջ 365:

գիտակցում, որ հազվադեպ է տեսանելի նրա ստեղծագործության մեջ և «տեղը» չգտնելու ստեղծագործական դրամա՝ արդեն հաճախադեպ է երևան գալիս նրա ամենատարբեր ժանրի ստեղծագործություններում:

Չափածո գրառումներ ամենից շատ Թումանյանը կատարել է Արփիկի ու Անուշի այբումներով¹²: Այդ ոտանավորներից երևում է, որ բանաստեղծի համար դուստրերից ամենասիրվածն այդ երկուսն են եղել: Նրանց մոտ նկատել ու գնահատել է նաև խոհուն միտք և զգայուն հոգի, այլապես հենց նրանց առջև չէր բացի իր անձնական աշխարհի ամենաթաքուն խորշերն ու նվիրական անկյունները:

Արփենիկին նվիրված չորս այբումային է հասել մեզ՝ բոլորն էլ գրված 1917 թ. ընթացքում: Դրանցում նկատելի միտում կա ներկայացնելու դասեր կերպարը՝ զվարթ ու կայտառ վառվռուն բնավորությամբ: Մի դեպքում, ինչպես «Արփենիկին» ութաստղ ոտանավորում, դա զուգահեռվում է «վայրենի, շքեղ» բնությանը, ուր «այծյամներ, ժայռեր», ամեն ինչ մշտապես «կանգնած են ու կան»:

Ու հիշում են միշտ էն գիժ աղջկան,
Որ իր կուսական զվարթ աղմուկով,
Աշխույժ ծիծաղով, ճիչով ու երգով
Լըցնում էր անտառն իրենց շրջակա –
Ու ... հիմա չըկա՛ ... ու հիմա չըկա՛ ... (հ. 1, էջ 311):

Ոտանավորը յուրօրինակ ձոն է դասերը և հիշված չորսից մեկն է, որ գրված է այբումից դուրս հունվարի վերջին օրը: Ինչո՞ւ է բանաստեղծը ձևավա կեսին հանկարծ հիշել ամառային Բորժումը, որտեղ մի ժամանակ հանգստացել են դասեր հետ: Ինչո՞ւ է վայրի բնությունը՝ իր կենդանի և անկենդան բոլոր գոյություններով, հիշում «այն գիժ աղջկան» և ամառում, որ «հիմա չկա»: Այս ամենը պետք է ընդունել միայն որպես սովորական բանաստեղծական հնարա՞նք, թե՞ ուրիշ խորհուրդ փնտրել դրանց հետևում, այսինքն՝ թե բնությունը իր վայրի գեղեցկությամբ թերի կլինե՞ր առանց մարդու ներկայության: Վերջապես հայտնի է, որ բնությունը, տիեզերքը լիարժեք ինքնագիտակցության հասնում են միայն մարդկային բանականությամբ: Սա, հավանաբար, նոր երանգ է թումանյանական բնապաշտության մեջ, որ արժանի է հաստուկ ուշադրության:

Մի այլ դեպքում, ինչպես «Իմ Արփիկին» այբումայինում, հայրական սիրո խնդագին զգացումը զուգադրվում է հոգում թանձրացած մթություններին.

Բայց դու փայլիր, խաղա, շողա,
Կյանքը լինի քեզ եղեմ,
Ցոլա, ժլպտա, հուր բոց տեղա
Արևմուտքի մութի դեմ:

Տիեզերք է իմ մեծ հոգին,

¹² Արփենիկի այբումը՝ ԹԹԳԳ, 860/4, Անուշինը՝ ԹԹԳԳ, 860/3:

Դու իր արվին բոցավառ,
 Սև անդունդներ ունի մըթին,
 Դու անըստվեր ու պայծառ (նույն տեղում, էջ 442):

Գոյության հավերժական ուղեկից այս տարամետ արժեքները, որոնք կյանքում անհամատեղելի են, բանաստեղծ հոգիներում չեն հակադրվում՝ այլ համադրվելով հաստատում են մշտապես հանգչող ու վերստին բռնկվող լինելության հրաշափառ խորհուրդը: Թումանյանական անդնդախոր հոգու սև մթնոլորտները հազար ու մի իրական ակունքներ կարող են ունենալ, բայց նրա կենսահայեցողության կառուցողական հիմքն այդ խորհրդի գիտակցումն է:

Հասկանալի այս զգացումներով շնչող քնարական մթնոլորտում նորից անսպասելիորեն հայտնվում են թումանյանական ծանոթ խոհերը մարդկային կյանքի վաղանցիկության ու տիեզերքի հավերժության մասին: Հարցը ծագում է անմիջապես՝ ինչո՞ւ, պատահական է դա, թե՞ ունի իր որոշակի տրամաբանությունը: Տեքստային ուշադիր զննությունը ցույց է տալիս, որ ալբոմայինը պարզապես ամանորյա (գրված է հունվարի 1-ին) մաղթանք է դստերը՝ իր դեռավոր զարուհն ապրելու կենսածիծաղ ու լիության՝ առանց մտածելու, թե իր նման քանի, քանի արև-արվիներ են եղել, որ այժմ հանգչում են հողի տակ¹³: Թող նրա «լույս ու կույս, շաղով, շողով» արևածագը կյանքի հաղթանակը լինի «արևմուտքի մութի», այսինքն՝ մահվան դեմ: Իսկ ինքը բանաստեղծ է, նախախնամության կամքով է սահմանված, որ բոլոր գոյությունների փոխարեն մշտապես պիտի կրի նրանց «հավերժական կսկիծը», ինչպես կասեր Ավետիք Բասիակյանը:

Արվիկի հետ Թումանյանի հոգեզրույցներում, ինչպես «Արվենիկի ալբոմում» բանաստեղծության մեջ, պատահում է՝ բանաստեղծը մոռացվում է, բացվում է տառապող մարդը և բազմազավակ հայրը, որն ուղղակի բաց տեքստով բացատրում է դստերը, թե ինչու է ինքն «անբուժելի տխուր»:

– Ինչ ունեի լավ ու պայծառ՝
 Ընկան, հանգա ն մի-մի, մի-մի,
 Օրորանս էլ՝ միակ, որ կար,
 Արնոտ եղավ ու թըշնամի ... (հ. 1, էջ 312):

Անշուշտ, նկատի ունի հոր մահը և Ռոստոմ եղբոր սպանությունը: Երկուսի ցավն էլ մինչև մահ ծխացել է բանաստեղծի հոգում: Իսկ առաջին ամիսներին պատերազմի հետ կապված հույսերի

¹³ Կյանքի անցողիկության թախծալի խոհերը բանաստեղծության առաջին ու վերջին քառատողերում են: Ալբոմային ձեռագրում բանաստեղծը հետագայում ջնջել է այդ երկու քառատողերը, որոնք ակադեմիական հրատարակության երկրորդ հատորում վերականգնված են ուղղանկյուն փակագծերով: Հատկապես վերջին քառատողը գրեթե բառացի հիշեցնում է «Խայամն ասավ իր սիրուհուն ...» հայտնի քառյակը, որ գրված է 1920-ին: Կարելի է ենթադրել, որ ալբոմային ձեռագրում ուղղումները բանաստեղծը կատարել է հենց այդ ժամանակ:

փլուզումը, եղեռնից մազապուրծ հազարավոր փախստականների հետ անցկացրած մղձավանջային շարաթները Էջմիածնում բանաստեղծին հաճախ հասցնում էին հուսահատության: Խորտակված հոգու համար միակ սփոփանքը մնում էր արդեն ավելի ու ավելի սակավադեպ դարձող բանաստեղծական ներշնչանքը և զավակները: Այդ է, որ ցավով խոստովանում է Արփիկին.

– Մըթնեց հոգուս երկինքն անհուն,
Միրտըս պատեց մեծ շափառուկ.
Մեռա՛ն, կորա՛ն շուրջս ու հեռուն,
Քընարս է լոկ մընացել ... և դուք ... (նույն տեղում):

Հատկանշական է, որ Արփիկին նվիրված չորս ոտանավորներից բանաստեղծի կենդանության ժամանակ տպագրվել է միայն այս մեկը, այն էլ՝ ընդամենը երկու տողում մի-մի բառի փոփոխությամբ (նույն տեղում, էջ 513): Ուրեմն բանաստեղծն առանձին կարևորություն է տվել դստեր հետ այս սրտաբաց մենագրույցին:

Դուստրերի այբումներում Թումանյանի չափածո գրառումների համար ընդհանուրը, իհարկե, հայրական սիրո զեղումներն են և հոգուն ծանրացած ցավերին նրանց հաղորդակից դարձնելով՝ սփոփվելու փորձերը: Յուրաքանչյուր առանձին դեպքում, սակայն, դրանք իմաստավորվում են նոր, երբեմն՝ անակնկալ կողմերով, ինչպես՝ «Երկար, երկար ման եկա ...»՝ այբումայինում, որ գրված է նախորդ երեքից ամիսներ անց¹⁴: Դժվար է ասել, թե այդ ընթացքում բանաստեղծի հոգեբանության մեջ ու մտաշխարհում ինչ փոփոխություններ են կատարվել, բայց որ բանաստեղծության ենթատեքստում հայտնվել են բովանդակային նոր շերտեր ու շեշտադրություն, ակնհայտ է: Հայրական խանդաղատանքի ու դրանով սփոփվելու պահն առկա է նաև այստեղ.

Դըստրիկ, դըստրիկ իմ անգին,
Դու գեղեցիկ ու բարի,
Աշխույժն, աշխույժն իմ կյանքի
Ու իմ վըշտոտ քընարի (հ. 1, էջ 316):

Սա բանաստեղծության հինգ քառատողերից երրորդն է, որը կառուցվածքային հանգույցի դեր է կատարում առաջին և վերջին երկուական քառատողերի միջև: Առաջինները խոստովանանք են սիրած դստերը, թե «չար ու դժվար էս կյանքում» «ոտքով, մոքով» երկար փնտրտութուններից հետո գտել է «երկու բան»:

Առաջինը՝

¹⁴ Նախորդները գրված են տարեակգրին մեկ ամսվա ընթացքում՝ հունվարի 1-ին, 31-ին և փետրվարի 5-ին, այս վերջինը՝ դեկտեմբերի 20-ին:

Վաղո՛ւց, վաղուց կար աստված,
Բայց կյանք տրվի ես բառին.

Երկրորդը՝

Դարձավ, դարձավ ինձ աստված
Գեղեցիկը ու բարին (նույն տեղում):

Այսինքն՝ աստված մարդկանց համար վաղուց ի վեր անկենդան բառ է եղել միայն, ինքը կյանք է տվել բառին՝ բացահայտելով դրա իրական բովանդակությունը, այն, որ աստծու էությունը գեղեցիկն է ու բարին: Եթե հավելենք դրան նաև ճշմարիտը, կստացվի, որ Թումանյանը նոր բան չի ասում: Նորն այն է, որ դրանք նույնպես կմնան անբովանդակ հնչյուն, քանի դեռ չեն դարձել մարդկանց երկրային կեցություն: Վերջին երկու քառատողերում ավելի առարկայական է դառնում այս գաղափարը.

Նայի՛ր, նայի՛ր սրբտաբաց
Էս լեն արձակ աշխարհին,
Առատ, առատ տարածված
Գեղեցիկը ու բարին:
Էսքա՛ն, էսքա՛ն մոտ ու շատ
Բախտը փրոված մեր կյանքում,
Մարդը, մարդը՝ միշտ անբախտ,
Որոնում է երկնքում (նույն տեղում, էջ 316):

Թումանյանական կենսափիլիսոփայության հիմնային գաղափարն է սա, որ տարբեր ձևերով ու նույն բովանդակությամբ արտահայտվել է նրա ստեղծագործության շատ էջերում և բյուրեղացվել քառյակներում: Բերենք վերջիններից միայն մեկը, որ ավելի ուղղակիորեն է առնչվում այս երկու քառատողերին.

Ազատ օրը, ազատ սերը, ամեն բարիք իր ձեռքին,
Տանջում, տանջվում, որոնում է ու դժբախտ է նա կրքկին.
Էյ անխելք մարդ, ե՞րբ տի թողնես ապրողն ապրի սրբտալի,
Ե՞րբ տի ապրես ու վայելես էս աշխարհքը շեն ու լի:
(հ. 2, էջ 41):

Մարդու համար Աստծուն՝ իր արարչին միանալու իրական «բախտը», այսինքն՝ ճշմարիտ ճանապարհը նրա ստեղծած «լեն արձակ աշխարհում» ազատ և «սրտալի» ապրելն է, ամենուր «առատ, առատ տարածված գեղեցիկը ու բարին» վայելելը: Մարդու փրկությունը ինքն իրենից այս

պարզ ճշմարտության լիակատար գիտակցության մեջ է: Փրկությունը երկնքից սպասելը մոլորություն է: Այս հավատով ապրեց ու ամեն օր հուսախաբ եղավ բանաստեղծ հոգին, բայց չփաստվեց՝ վերջին շնչի հետ հետնորդներին ուղղելով իր քաջալերության խոսքը՝ «Ղոչաղ կացեք»¹⁵:

Թումանյանը լավ էր ճանաչում իր դուստրերին՝ ամեն մեկին սիրելով ու գնահատելով յուրովի: Եթե Արփենիկը նրա «վշտոտ քնարին» սփոփանք էր աշխույժ ու կենսաթրթիռ աղջկական տարերքով, ապա Անուշը գրավում էր խոհուն ու խորհոգի նկարագրով: Ահա թե ինչ է գրում նրա մասին ավագ դստերը՝ Աշխենին. «Դու իսկի գիտե՞ս, թե ինչ է մեր Անուշը, երբ որ սիրտը բացում է:

Մի քանի անգամ նա ինձ էնպես է զարմացրել, էնքան սրտալիություն, էնքան հրապուրանք, էնքան խելացիություն ու ճաշակ, նրբություն է հանդես բերել, որ ես հաճախ ուզում եմ միմիայն վերհիշել ու վերապրել էդ ժամերը ու լիուլի երջանկություն եմ վայելում՝ մտածելով, թե էդ մեր Անուշն է» (հ. 10, էջ 359): Այս առիթով հարկ է հիշել նաև այս նամակից երկու տարի առաջ Անուշի այլումում արված մի քառատող չափածո գրառում՝ «Գրագ Աստծու և պոետի» վերնագրով.

Գրագ եկան ու տըվին
Երկու Անուշ – երգ ու կին.
Պոետն աշխարհի հիացրեց¹⁶,
Աստված՝ իրեն – պոետին (հ. 1, էջ 323):

Անուշի հանդեպ այս հատուկ վերաբերմունքով է պայմանավորված, որ նրա այլումում գրառումները բնույթով ու բովանդակությամբ որոշակիորեն տարբերվում են Արփենիկի այլումում եղածներից. այս վերջիններում շեշտադրությունն առավելապես անմիջական զգացմունքային է, Անուշի առջև բանաստեղծի հոգին բացվում է ավելի խորքային շերտերով: Ծննդյան տարեդարձի առթիվ այլումային «ЭКСПРОМТ»-ն, օրինակ, հայրական մաղթանք լինելուց բացի, նաև ձգտում է շնորհաշատ դստերը տրամադրելու դեպի իր հոգին թնավորող «վեր»-ի աշխարհը.

Իմ Անուշը, իմ ողջը թանկ,
Իմ խնդություն, իմ թարմ հրրճվանք,
Առ քընարս ... լանջիդ վրա,
Աստղի փայլով ցոլա թող նա,
Եվ երբ կյանքում պատի գիշեր,
Ճամփա ցույց տա միշտ դեպի վեր (նույն տեղում, էջ 445):

¹⁵ Տե՛ս Ն. Թումանյան. նշվ. աշխ., էջ 315:

¹⁶ Սա այն եզակի դեպքերից է, երբ բանաստեղծը թույլ է տալիս իրեն այսպես անվերապահ արտահայտվել սեփական ստեղծագործության մասին:

Երբորդ տողի կախման կետերը մի բան կարող են նշանակել. եթե այլ պարագաներում, ինչպես Արփիկի ալբոմում, դուստրերն էին ավտոմատ բանաստեղծի «վշտոտ քնարի» համար, ապա այս դեպքում քնարն է նրանց համար բախտի ուղեցույց: Այլ խոսքով՝ մոտիկից շփվելով իր փայփայած գեղեցիկ իդեալների հետ՝ նրանք կտվորեն «արևի նման նայել աշխարհին» (հ. 7, էջ 33)¹⁷: Անուշի հետ բանաստեղծը, հավանաբար, հաճախ է գրուցել այս թեմայով և միշտ չէ, որ լիովին հասկանալի է եղել նրան: Այդ մասին է վկայում բերված «Экспромт»-ից ընդամենը չորս օր առաջ դստեր ալբոմում մի այլ քառատող գրառում.

Ափսո՛ս, որ չես տեսնում բընավ
Տագնապն հոգուս խոր ու վեհ.
Հագար անգամ ափսոս ու ցավ,
Որ պիտ տեսնես՝ երբևէ ... (նույն տեղում, էջ 444):

Բավական անթափանց այս ակնարկի վերաբերյալ որոշ կոախումների հիմք կարող է տալ պոեմի հերոսուհի Անուշին նվիրված մի սևագիր ոտանավոր¹⁸: Դիմելով «անդարձ ճամփան» զնացող իր հերոսուհուն՝ բանաստեղծը ներկայացնում է այն «վայրերը անմահական», ուր «մարդն ապրում է հոգիացած» ու «միշտ երջանիկ»: «Լույս ճամփան» դեռ մանկուց է «քաջածանոթ» իրեն.

Քանի անգամ հրրաթև
Անցել եմ ես, ոտներս ամպոտ,
Հասել աշխարհին էն եղեմ –
Բայց միշտ, ավա՛դ, կարճատև (նույն տեղում, էջ 434):

Այդ «եղեմ աշխարհի» հեռապատկերով է հրապուրում բանաստեղծն իր դուստր Անուշին, բայց ոչ թե երկնքում, այլ երկրի վրա, ինչպես տեսանք Արփենիկի ալբոմայիններում՝ «Երկար, երկար ման եկա ...» ոտանավորի առիթով: Արփենիկի հետ բանաստեղծը խոսում է բաց տեքստով, Անուշին ինքնություն կոախումների տեղ է թողնում՝ վստահելով նրա ներքնատեսությանը:

Դուստրերի ալբոմներում Թումանյանը հաճախ է ակնարկում իր մենակության մասին: Բայց, եթե այլ պարագաներում այդ զգացողությունը զուտ անձնական հիմք ուներ, ապա Անուշի հետ ալբոմային զրույցներում մենակության զգացումը բանաստեղծ հոգիների անբաժան ուղեկիցն է. ծնվում է նրանց հետ ու նրանց հետ էլ մահանում.

¹⁷ Այս խորհուրդն էր տալիս Թումանյանը պատանի գրասերներին:

¹⁸ Ձեռագիրն անթվակիր է: Ակադեմիական տասնհատորյակում մոտավոր ժամանակը նշված է 1900-ական թվականներ: Բայց դատելով բովանդակությունից՝ ավելի հավանական է, որ գրված լինի ավելի ուշ՝ Անուշի ալբոմում կատարված գրառումների շրջանում՝ 1910-ական թվականների վերջերին:

Երազեցի շարունակ
Իմ կյանքի մեջ ես մանկուց,
Ու մընացի միշտ մենակ
Պատրանքի մեջ՝ ես մանկուց:

Ես չըզտա ոչ մեկին
Երազներից իմ շրջել,
Եվ ոչ մի մարդ, ոչ մի կին
Հերոսներից իմ շրջել (նույն տեղում, էջ 309):

Այս է պատճառը, որ բանաստեղծները հաճախ մեկուսանում են իրականությունից, ստեղծում են իրենց հոգու աշխարհը՝ այնտեղ սփռվելու համար կյանքի ցավերից, ինչպես Թումանյանը «Բարձրից» բանաստեղծության վերջում¹⁹: Անուշի այբումում այս խոստովանությունը ցույց է տալիս, որ հանձին նրա՝ բանաստեղծը գտել էր իր հոգու աշխարհի հետ հաղորդակցվելու ունակ մեկին: Դա երևում է նաև 1920 թ. հոկտեմբերի 9-ին դատերը գրած նամակից²⁰: Գիշերվա կեսին տանը մենակ մնացած բանաստեղծը պահանջ է զգում «զրուց անել» դատեր հետ. «Էսպես այժմ ես մենակ եմ կարիներտում – մտածեցի քեզ հետ մի քիչ զրույց անեմ:

Եվ զարմանալին ինչն է: Զարմանալին էն է, որ հենց էս րոպեին միաժամանակ մտածում եմ՝ թե նույնիսկ էս հաճույքն էլ, որ հեռվից զրույց եմ անում քեզ հետ – պիտի անցնի:

Լսողը կարող է կարծել, թե էդ միտքը կթունավորի հենց էս հաճույքն էլ, բայց ո՛չ, եղպես չի ինձանում: Ընդհակառակը, ավելի խորացնում է ու գեղեցկացնում, որովհետև անցնելուց ես չեմ սարսափում, ես լավ գիտեմ, որ պիտի անցնի, ես հաշտված եմ դրա հետ: Թեպետև, իհարկե, մի խորին վիշտ ասեմ թե ավառսանք էլ հետոն ունեմ միշտ:

Ուզում էի երկար խոսել, բայց գալիս են արդեն: Բարի գիշեր, Անուշ ջան» (հ. 10, էջ 363):

Այս բովանդակությամբ զրույցներ, որոնք թումանյանական կենսափոխակերպության միջուկն են, բանաստեղծը դուստրերից ոչ մեկի հետ չի ունեցել: Մասնավորապես կյանքի վաղանցիկության մասին ակնարկներ, որոնք ամեն անգամ առնչվում են այլևայլ կենսական խնդիրներին, կան Անուշի այբումում պահպանված գրեթե բոլոր ոտանավորներում: Հատկանշական է, որ դրանցից միայն մեկը՝ ամենաառաջինն է բանաստեղծը հարկ համարել տպագրել «Անուշի այբումից» վերնագրով²¹՝ մնացածները համարելով իր և դատեր հոգու սեփականություն: Այնուամենայնիվ, դրանցից երկուսին տարբեր առիթներով գրականագիտությունն անդրադարձել է:

Դրանցից մեկը հանրահայտ երկու քառատողերն են.

¹⁹ Այս մասին տե՛ս տողերիս հեղինակի «Թումանյանի «Բարձրից» բանաստեղծությունը (տեքստային վերլուծության փորձ)» վերնագրով հոդվածը [«Գրականագիտական հանդես» (Երևան), 2014, էջ 118]:

²⁰ Անուշն այդ ժամանակ Երևանում էր՝ Աշխենի մոտ:

²¹ Տե՛ս «Գեղարվեստ» (Թիֆլիս), 1921, թիվ 7, էջ 66:

Կանցնեն օրերն, Անուշ ջան,
Կանցնի քո հորն, Անուշ ջան,
Ու կըտանի իրեն հետ
Իր ցավն ու սերն, Անուշ ջան:

Ցավը՝ անտակ ծովի պես,
Մերը՝ անհագ սովի պես.
Ծովի միջին ու սովի՝
Անբախտ Սայաթ-Նովի պես (հ. 1, էջ 314):

«Անտակ ծովի պես» ցավի և «անհագ սովի պես» սիրո ենթատեքստում ուսումնասիրողները սովորաբար միայն որոշակի սոցիալական բովանդակություն են տեսնում²²: Այդ դեպքում ի նչ իմաստ ունի հիշեցնելու, թե անցնող օրերի պես ինքն էլ կանցնի՝ հետը տանելով իր «ցավն ու սերը»՝ ինչպես «անբախտ» Սայաթ-Նովան: Արդյոք դա չի նշանակում, թե մարդն անցնողական է, ցավն ու սերը՝ հավիտենական, ինչպես աշխարհը: Դրանք բանական գոյի անբաժան ուղեկիցներն են: Մեկի տառապանքն ու մյուսի հրճվանքը բանաստեղծ հոգիների կեցության երկու երեսներն են: Նրանցից յուրաքանչյուրն այդ ցավն ու սերն ապրում է յուրովի և իր ապրածն էլ հետը տանում: Մա չէ՞, որ մտահոգում էր Թումանյանին, թե իրեն չհասկացան և, հավանաբար, երբեք էլ չեն հասկանա: Մա ոչ հոռետեսություն է, որից աշխատենք ձերբազատել բանաստեղծին, ոչ էլ լավատեսություն, որի համար ծափահարենք նրան: Դա հենց ինքը՝ կյանքն է: Իսկ թե այդ կյանքը գեղեցիկ ապրելու ինչ պատգամ էր հղում բանաստեղծը «դժբախտ» մարդուն, տեսանք Արփենիկի ալբոմից՝ «Երկար, երկար ման եկա ...» բանաստեղծությանն անդրադառնալիս:

Այս դատողությունները կարող են տպավորություն ստեղծել, թե անտեսվում են սոցիալական ու քաղաքական իրականության այն ճշմարտացի պատկերները, որոնք թումանյանական «ահավոր թախծի» և «հայոց վշտի» առարկայական հիմքն են: Սակայն իրականության ճշմարտացի արտացոլումն ամեն մի իսկական ստեղծագործողի գլխավոր խնդիրն է: Նրանք միմյանցից տարբերվում են գլխավորապես նրանով, թե իդեալի ինչ հետավորությունից են դիտում ու իմաստավորում այդ իրականությունը: Այս տեսակետից Թումանյանը եզակի տեղ է զբաղեցնում իր ժամանակակիցների շարքում (հ. 2, էջ 504–510)²³:

²² Խ. Գյուլնազարյանն այս քառատողերի մասին գրում է. «Նույնիսկ, այսպես կոչված, «ալբոմային» բանաստեղծություններում իրար կողքի մեծ ուժով արտահայտվում են հասարակական վիշտն ու անհատական զգացումը: «Ցավը անտակ ծովի պես, սերը անհագ սովի պես» – ահա մարդկային հոգու հանճարեղորեն բացված գաղտնիքը (տե՛ս հ. 1, էջ 552):

²³ Այս մասին ավելի հանգամանորեն տե՛ս մեր՝ «Վերահրատարակության խմբագրության կողմից» վերնագրով հոդվածը:

Դիտարկված քառատողերի քննարական տրամադրությունը շարունակվում է դարձյալ «Անուշի ալբոմում» դրանցից ընդամենը մի քանի օր անց գրված «Քոշաքարում ես վազել եմ ... » բանաստեղծության մեջ²⁴, որը մի տեսակ քառյակային կառույց է հիշեցնում. ինչպես քառյակում տողերից յուրաքանչյուրը, այնպես էլ այստեղ չորս քառատող տներից ամեն մեկը կառուցվածքային հանգույցի իր որոշակի դերն ունի հեղինակային ճարտարապետության մեջ:

Առաջին քառատողը մտահղացման ելակետային պահն է, կառույցի նախադրությունը.

Քոշաքարում ես վազել եմ
Եղնիկի հետ երազ, Անուշ,
Զրմբուխտ սարում երազել եմ
Զնաշխարհիկ երազ, Անուշ (հ. 1, էջ 315):

Հայրենի բնաշխարհի՝ մանկության հիշողություններում մշտավառ տպավորությունների մասին մեկ անգամ չէ, որ անդրադարձել է բանաստեղծն իր՝ տարբեր ժանրի գործերում: Այս դեպքում ընդամենը չորս տողում երկու անգամ դասերը հականե-հանվանե դիմելու փաստը, որը նրա ուշադրությունն անընդհատ լարված պահելու նպատակ ունի, հուշում է այլ իմաստ փնտրել մանկական հիշողության մեջ: «Երազ եղնիկի» ու «Զնաշխարհիկ երազի» մասին ակնարկն ավելի է հիմնավորում այդ ենթադրությունը, որն արդեն տեսանելի իրողություն է դառնում երկրորդ քառատողում.

Զրմբուխտ սարը ամպ է պատել,
Իմ արևի լույսը վատել,
Աստծուն խնդիրք արի շատ էլ՝
Ինձ չըտրվեց մուրազ, Անուշ (նույն տեղում):

Մանկության «Զնաշխարհիկ երազի» և իրական կյանքի հակադրության այս ցավագին գիտակցությունը, որը Թումանյանի աշխարհը բացելու ու մեկնաբանելու հիմնական բանալին է բոլոր ուսումնասիրողների համար՝ հատկապես սոցիալ-գաղափարական պլանում, այս դեպքում խորապես անձնական է և ավելի լայնախորհուրդ: Այս նույն «մուրազով» հազար տարի առաջ աստծու արդարամտությանը «խնդիրք» էր անում նաև Գրիգոր Նարեկացին՝ միայն մի տարբերությամբ, որ եթե «մեծ աղոթասաց բանաստեղծի» պաղատանքը հույսի ու հավատի լուսավոր հիմք ուներ, ապա նույն հոգեվիճակում հայտնված նրա հեռավոր հետնորդը մերժումի ցավ է ապրում: Բայց դժգոհության ու բողոքի ոչ մի երանգ արդեն չկա այդ ցավի մեջ: Մնում է միայն ավառսանքով հիշեցնել.

Իմ մուրազը շատ էր շրթեղ,
Դըրախտ պիտեի քաղաք ու գեղ.

²⁴ Մեկը գրված է 1917 թ. նոյեմբերի 7-ին, մյուսը՝ նոյեմբերի 20-ին:

Երգը հոսեր հառաչքի տեղ,
Մերն ու բարին՝ Արագ, Անուշ (նույն տեղում):

Դարձյալ վերադարձ երկնքից երկիր, ինչպես տեսանք «Երկար, երկար ման եկա ...» բանաստեղծության մեջ՝ Արփիկի ալբոմից: Միայն եթե այնտեղ շեշտվում էր ավստասանքի դառնությունը, որը մարդիկ չեն կարող տեսնել ու վայելել իրենց շուրջը «առատ, առատ տարածված գեղեցիկը ու բարին», ապա այստեղ, ինչպես տեսանք վերևում՝ «Կանցնեն օրերն, Անուշ ջան ...» երկքառատող ալբոմայինում, իրերի այդպիսի դրվածքը կրկին ընդունվում է իբրև մարդու կյանքից մշտապես անբաժան իրողություն:

Շատ են եկել էսպես անցել,
Հազա՛ր ավստս էն մարդկանց էլ.
Ես էլ կերթամ, վեր եմ կացել
Էսքան վաղ ու վրձագ, Անուշ (նույն տեղում):

Մերնդեսերունդ անցնող այդ «տանջող ցավի» գիտակցությունը մտահոգում էր դեռևս 18-ամյա բանաստեղծին, երբ գրում էր «Հին օրհնության» հազներգական մաղթանքը. «Ապրե՛ք, երեխեք, բայց մեզ պես չապրեք ...»: Ուսումնասիրողները հաճախ են վկայակոչում վաղուց արդեն ժողովրդականացած այս օրհնանքը և համարյա միշտ «Գութանի երգի» հետ՝ նկատի ունենալով միայն դրանց պատմականորեն որոշ սոցիալական բովանդակությունը: Բայց դրանով շատ չեն ներհանում պատանի հանճարի մտահղացման շրջանակները, չէ՞ որ հենց պատանեկան այս ներշնչումների մեջ է սաղմնավորվել թումանյանական «շքեղ երազը», որ տասնամյակների ընթացքում պիտի ծավալվեր ու ծավալվեր մինչև երկրային և երկնային կյանքերի ներդաշնակության իդեալը:

Ուրեմն ինչպես՞ պիտի հասկանալ բանաստեղծին՝ ըստ բերված քառատողի. մի՞թե նա անիմաստ է համարում կյանքն առհասարակ, ինչպես հոռետես փիլիսոփաներից շատերը, մի՞թե իզուր էր վերջին շնչով պատգամում զավակներին, թե՛ «դոչաղ կացեք»: Այս հարցի դիպուկ պատասխանը գտնում ենք Դանիել Վարուժանի «Նեմեսիս»-ում.

Ո՛հ, ի՞նչ փույթ կյանքը մեռնող,
Երբոր երազը կ'ապրի
Երբոր երազն անմա հ է²⁵:

²⁵ Դ. Վարուժան. Երկերի լիակատար ժողովածու երեք հատորով, հ. 1, Երևան, 1986, էջ 75: Բելգիայի Գենտի համալսարանում, որտեղ սովորել է Վարուժանը, կա մի անկյուն՝ նրա բարձրաքանդակ դիմապատկերով՝ ներքևում մակագրված այս տողերը:

Այս տողերը բնաբան կարող են լինել Թումանյանի ամբողջ ստեղծագործության համար: Այո՛, մարդ անհատը, սերունդները գալիս են ու գնում, բայց կյանքը հավերժատն է, կարող է կանգ առնել միայն, եթե մեռնի երազը: Այսինքն՝ գոյության իմաստը մարդու, մարդկության անվերջանալի երազ-ձգտումն է դեպի ավելի ու ավելի լավ կյանք ու աշխարհ: Այս իմաստության գիտակցումն է, որ բանաստեղծին հաշտեցնում է մահվան հետ, ինչպես նա գրում էր Անուշին ուղղված նամակում: Այս գիտակցությունն է իր քառասնամյա տարեդարձի օրը լուսավորել Մետեխում բանտարկված բանաստեղծի միտքը՝ հայտնի «Վայրէջքի» ավարտին գրելու.

Եվ ես իմաստուն ու բեռս թեթև,
Անհոգ ծիծաղով,
Երգով ու տաղով,
Իջնում եմ զըվարթ իմ լեռան ետև (հ. 1, էջ 261):

Թումանյան բանաստեղծի, ինչպես, հավանաբար, ամեն մի մեծ ստեղծագործողի համար հատկապես կյանքի վերջին տարիներին կենսական պահանջ է դառնում մարդկանց ներկայանալ նաև իրենց անձնական աշխարհի թաքուն երեսներով, բայց միշտ չէ, որ գտնում են հաղորդակից հոգի: Չհասկացվածության այդ ցավն ամբողջ կյանքում տանջել է մանավանդ Թումանյան մարդուն: Դա սրտաբաց անմիջականությամբ արտահայտվել է 1917 թ. հունվարի 8-ին Աշխենի այբումում գրված «Երեխի նման» ոտանավորում: Ինքը «Երագուն ու խենթ երեխի նման» անմնացորդ նվիրվել է մարդկանց, բայց բոլորը, անգամ «ընկեր, մերձավոր, և եղբայր, և կին» «խեղ» են նայել իր անմեղ «հաճույքներին», ծաղրել են «երազ, և սեր, և հավատ»: Ու դիմում է դուստրերին.

Եվ ահա էսպես՝ հոգնած ու վշտոտ,
Դադարգուն եղա, ամենքից փախա.
Ամենքից փախած գալիս եմ ձեզ մոտ,
Եվ դուք էլ, ավա՛ դ, ինձ պես երեխա (նույն տեղում, էջ 443):

Հետագայում ձեռագրի վրա ուղղումներ կատարելիս վերջին տողի «ավա՛ դ»-ը բանաստեղծը ջնջել է ու թեև տեղը նոր բառ չի դրել, բայց առանց դրան էլ հասկանալի է, որ նաև դուստրերի «երեխա» լինելու մասին ակնարկն ոչ թե ավիտասանքի նշան է, այլ գոհունակության, որովհետև երեխան երեխային ավելի լավ է հասկանում, քան հասուն մարդիկ իրար: Սա Թումանյանի բանաստեղծական բարոյափիլիսոփայության հիմնարար արժեքներից է, որ ենթատեքստային մակարդակով ասկա է նրա բազմաժանր ստեղծագործության շատ էջերում և բացեիքաց տեսանելի է դուստրերի այբումների չափածո գրառումներում: Հավանաբար, սխալված չենք լինի, եթե ասենք, որ այս ոտանավորը գրելիս բանաստեղծը հիշել է Արթուր Շոպենհաուերի հանրահայտ միտքը. «Յուրաքանչյուր երեխա ինչ-որ չափով հանճար է, և յուրաքանչյուր հանճար՝ ինչ-որ չափով երեխա»:

Եզրակացություն

Հովհ. Թումանյանի ալբոմային բանաստեղծությունները նրա բազմաժանր ստեղծագործության բացառիկ միասնական ու ներդաշնակ կառույցում անկապտելի հանգույց են ներկայացնում: Դրանց համակողմանի ուսումնասիրությունը մեծապես կօգնի ճիշտ ու արագ կողմնորոշվել բանաստեղծի՝ «աչքի նման պարզ ու աչքի նման բարդ» աշխարհում: Միաժամանակ ալբոմայինների հուզական մթնոլորտի ինչ-ինչ անկյուններ մութ կմնային, եթե չփորձեինք դրանք լուսավորել հեղինակի բանաստեղծական բարոյափիլիսոփայության հեռվից:

Վլադիմիր Կիրակոսյան – բ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի թումանյանագիտական խմբի ղեկավար: Գիտական հետաքրքրությունները՝ XX դարասկզբի արևմտահայ պոեզիա, թումանյանագիտություն: Հեղինակ է 3 մենագրության և ավելի քան 80 հոդվածի: vladimirkirakosyan1936@gmail.com

REFERENCES

- Edoyan H. Poeziayi erkaki tesoghutyune, Yerevan, 2020 (In Armenian).
 “Gegharvest” (Tiflis), 1921, tiv 7 (In Armenian).
 “Grakanagitakan handes” (Yerevan), 2014 (In Armenian).
 Tumanyan Hovh. Yerkeri liakat ar joghovatsu, h. 1, Yerevan, 2018; h. 2, Yerevan, 2018; h. 4, Yerevan, 1991; h. 7, Yerevan, 1995; h. 10, Yerevan, 1999 (In Armenian).
 Hovh. Tumanyan Tangaran, glkhavor guykamatian, 860/1; 860/2; 860/3; 860/4 (In Armenian).
 Tumanyan N. Husher ev zruytsner, Yerevan, 1987 (In Armenian).
 Varujan D. Yerkeri liakat ar joghovatsu erek hatorov, Yerevan, 1986 (In Armenian).

АЛЬБОМНЫЕ СТИХОТВОРЕНИЯ ОВ. ТУМАНЯНА
В КОНТЕКСТЕ ЕГО ТВОРЧЕСТВА

ВЛАДИМИР КИРАКОСЯН

Резюме

Ключевые слова: Туманян, личная и творческая психология, мгновение и вечность, идеал и реальность, добрый и красивый, боль, любовь, одиночество.

Альбомные стихотворения великого армянского поэта Ов. Туманяна составляют в его лирике своеобразный целостный цикл, по его выражению, «отдельный – интимный альбом». Исследователи косвенно касались одного-двух из них только в связи с другими вопросами. Между тем детальные текстовые анализы показывают, что они могут стать ключом для раскрытия многих существенных граней жизненной философии и творческой психологии поэта, которые зачастую трудно объяснимы в

других произведениях. С этой точки зрения особый интерес представляют стихотворные записи, сделанные Туманяном в альбомах дочерей. Они с особенной глубиной и непосредственностью раскрывают внутренний мир Туманяна – человека и творца, с самыми затаенными и заветными его уголками. Многие альбомные стихотворения Туманяна, несмотря на то, что написаны экспромтом, являются настоящими плодами внезапного творческого озарения.

Владимир Киракосян – д. филол. н., проф., научный руководитель туманяноведческой группы Института литературы им. М. Абегаля НАН РА. Научные интересы: западноармянская поэзия начала XX века, туманяноведение. Автор 3 монографий и более 80 статей. vladimirkirakosyan1936@gmail.com

HOVH. TUMANYAN'S ALBUM POEMS IN THE CONTEXT OF HIS OEUVRE

VLADIMIR KIRAKOSYAN

Summary

Key words: Tumanyan, personal and creative psychology, moment and eternity, ideal and reality, kind and beautiful, pain, love, loneliness.

The album poems of great Armenian poet Hovh. Tumanyan are original complete series, “a separate - intimate album” in his lyric. The researchers have identified only one or two of these works not deeply when researching other issues. Meanwhile, the detailed text examination of these works shows that they can be a key to discover very important aspects of the poet’s personal and creative psychology, which are often difficult to explain in other works. In this point of view the verse notes made by Tumanyan in his daughters’ albums are of particular interest, which with special depth and directness open the inner world of Tumanyan as a creator and as a human, with the most secret and cherished corners. Though the majority of Tumanyan’s albums are written by improvisation, nevertheless, they are the real fruits of sudden creative clairvoyance.

Vladimir Kirakosyan – Doctor of Sciences in Philology, Professor, Scientific Supervisor of the Tumanyan studies’ research group at the Institute of Literature after M. Abeghian of the NAS RA. Scientific interests: Western Armenian poetry of the beginning of the 20th century, Tumanyan studies. Author of 3 monographs and around 80 articles. vladimirkirakosyan1936@gmail.com